ՀՀ քաղաքացիական օրենսգիրք

1. Նշված գործարքներից ո՞րը չի կարող կնքել 14-18 տարեկան անչափահասը.

2. Նշվածներից ո՞րն է լիակատար ընկերակցությունը.

3. Նշվածներից ո՞րն է հիմնադրամը.

4. Նշված իրավազորություններից ո՞րը չի մտնում հողամասի կառուցապատման իրավունքի մեջ.

5. Նշվածներից ո՞րը գրավի դադարման հիմք չէ.

6. Նշված գործարքներից ո՞րը չի կարող կնքվել հասարակ գրավոր ձևով.

7. Նշվածներից ո՞րն է գործակալության պայմանագրի բնորոշումը.

8. Ո՞ր դեպքերում է փոխառության պայմանագիրը ենթադրվում անտոկոս.

9. Ե՞րբ չի թույլատրվում փոխառության պայմանագիրը վիճարկել վկաների ցուցմունքների հիման վրա.

10. Ի՞նչ է նոտարի դեպոզիտ հաշվի պայմանագիրը.

11. Նշվածներից ո՞րը չի մտնում ժառանգական զանգվածի մեջ.

12. Նշվածներից ո՞րը չի հավասարեցվում է նոտարի կողմից վավերացված կտակներին.

13. Նշված անձանցից ո՞վ կարող է կտակարարի փոխարեն ստորագրել կտակը.

14. Ե՞րբ է ժառանգության իրավունք ձեռք բերում մայրական կողմի պապը.

15. Նշվածներից ո՞ր դեպքում չեն ավելացվում ժառանգության բաժինները.

16. Ժառանգության հետ կապված ո՞ր ծախսերն են հատուցվում երրորդ հերթին.

17. Իրավաբանական անձի լուծարման դեպքում ո՞ր հերթին է մարվում բյուջե կատարվող պարտադիր վճարների պարտքը.

18. Ո՞ր տեղեկատվությունն է համարվում ծառայողական գաղտնիք.

19. Նշվածներից ո՞րը արժեթղթի տեսակ չէ.

20. Նշվածներից ո՞վ իրավունք չունի անձի մահվան կամ անգործունակության դեպքում դատական կարգով պահանջելու պատճառված ոչ նյութական վնասի հատուցում.

21. Նշվածներից ո՞ր դեպքում է քաղաքացին դատարանով ճանաչվում մահացած.

22. Նշված իրավաբանական անձանցից ո՞րը չի կարող ստեղծվել ոչ առևտրային կազմակերպության ձևով.

23. Նշվածներից ո՞րը գույքի անհատույց օգտագործման պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմք չէ.

24. Նշվածներից ո՞րը գրավի տեսակ չէ.

25. Նշվածներից ո՞րը քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակ չէ.

26. Նշված գործարքներից ո՞րն է առոչինչ.

27. Նշվածներից ո՞րն է լիազորագրի գործողության դադարեցման հիմք.

28. Նշվածներից ո՞րն է հայցային վաղեմության ժամկետը կասեցնելու հիմք.

29. Ի՞նչ է մանրածախ առուծախի պայմանագիրը.

30. Ե՞րբ կարող է կողմը պայմանագրի փոփոխման կամ լուծման մասին պահանջը դատարան ներկայացնել

31. Ի՞նչ է մատակարարման պայմանագիրը.

32. Ե՞րբ են հաշվարկները կատարվում ակրեդիտիվով.

33. Ե՞րբ են հաշվարկները կատարվում ինկասոով.

34. Շահերի համար պատշաճ հոգատարություն չցուցաբերած հավատարմագրային կառավարիչը ո՞ր վնասն է հատուցում շահառուին.

35. Նշվածներից ո՞րն է իրավաբանական անձի ներկայացուցչությունը.

36. Նշվածներից ո՞րն է դուստր ընկերությունը.

37. Նշվածներից ո՞րն է լիակատար ընկերակցությունը.

38. Նշվածներից ո՞րն է վստահության վրա հիմնված ընկերակցությունը.

39. Ո՞րն է սահմանափակ պատասխանատվության ընկերությունը.

40. Հողամասի նկատմամբ ընդհանուր սեփականության դեպքում քաղաքացուն կամ իրավաբանական անձին պատկանող ո՞ր հողամասի նկատմամբ կարող է հիփոթեք սահմանվել.

41. Նշվածներից ո՞ր դեպքում սեփականատերն իրավունք չունի բարեխիղճ ձեռք բերողից գույքը հետ պահանջել, եթե գույքը հատուցմամբ է ձեռք բերվել.

42. Նշվածներից ի՞նչ իրավունքն ունի փոխառուն, երբ փոխատուն գույքը չի հանձնում վերջինիս

43. Նշված գործարքներից ո՞րը չի կարող ինքնուրույն կնքել 6-14 տարեկան անչափահասը.

44. Նշվածներից ո՞րն է կապալի հասկացությունը

45. Նշվածներից ո՞րն է համապատասխանում կենցաղային կապալի հասկացությանը.

46. Նշվածներից ո՞րն է համապատասխանում հանձնարարության պայմանագրի հասկացությանը.

47. Նշվածներից ո՞րն է հրապարակային օֆերտան.

48. Ի՞նչ ձևով է կնքվում պայմանագրի փոփոխման կամ լուծման համաձայնությունը.

49. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ ինչպիսի՞ պայմանագիր է մանրածախ առուվաճառքի պայմանագիրը.

50. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ ի՞նչ է վաճառասեղանների վրա ապրանքի ցուցադրումը.

51. Ինչպե՞ս է կնքվում մատակարարման պայմանագիրը.

52. Ի՞նչ է տեղի ունենում, երբ անշարժ գույքի վաճառքի պայմանագրում բացակայում է գնի մասին պայմանը.

53. Ու՞մ անունից է հավատարմագրային կառավարիչը հավատարմագրային կառավարման հանձնված գույքի հետ կապված գործարքները կնքում.

54. Հավատարմագրային կառավարչի գործողությունների մասին ցուցումի բացակայության դեպքում ո՞վ է պարտավորվում երրորդ անձանց հանդեպ.

55. Ո՞վ կարող է լինել հավատարմագրային կառավարիչ, եթե կառավարումը չի իրականացվում օրենքով նախատեսված հիմքերով.

56. Նշվածներից ո՞րը չէ հավատարմագրային կառավարման պայմանագրի էական պայման.

57. Որքա՞ն ժամկետով է կնքվում հավատարմագրային կառավարման պայմանագիրը.

58. Ինչպե՞ս է կնքվում շարժական գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիրը.

59. Գույքի հավատարմագրային կառավարման ժամանակ շահերի համար պատշաճ հոգատարություն չցուցաբերած հավատարմագրային կառավարիչը ո՞ր վնասն է հատուցում կառավարման հիմնադրին.

60. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ նշվածներից ո՞րը չէ քաղաքացիական օրենսդրության սկզբունք.

61. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում ո՞ր մեկնաբանմանն է նախապատվությունը տրվում.

62. Նշվածներից ո՞րը ենթակա չէ պետական գրանցման՝ որպես քաղաքացիական կացության ակտ.

63. Նշվածներից ո՞րը առևտրային կազկապերպություն չէ.

64. Իրավաբանական անձի լուծարման դեպքում առաջին հերթին ո՞ր պարտատերերի պահանջներն են բավարարվում.

65. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ ի՞նչ ձևով չեն կարող ստեղծվել ընկերակցությունները.

66. Անձը քանի՞ լիակատար ընկերակցության անդամ կարող է լինել.

67. Նշվածներից ո՞րն է փակ բաժնետիրական ընկերությունների հասկացությունը.

68. Նշվածներից ո՞րն է համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված սեփականության իրավունքի հասկացությանը

69. Ո՞վ է ձեռք բերում վերամշակման արդյունքում նոր պատրաստված շարժական գույքի նկատմամբ սեփականության իրավունք, եթե վերամշակման արժեքն էականորեն գերազանցում է նյութերի արժեքը.

70. Ո՞րն է ապահովված իրավունքը.

71. Նշվածներից ո՞րը չի կարող լինել ապահովված իրավունքի առարկա.

72. Նշվածներից ո՞րը կարող է լինել ապահովված իրավունքի առարկա.

73. Կառուցվող բազմաբնակարան շենքի բնակարանի հիփոթեքի դեպքում, մինչև սահմանված կարգով շենքի շահագործման ակտի ձևակերպումը, ինչի՞ վրա է տարածվում բնակարանի հիփոթեքի իրավունքը.

74. Նշվածներից ո՞րը վինդիկացիոն հայցով չի կարող հետ պահանջվել բարեխիղճ ձեռքբերողից.

75. Նշվածներից ո՞ր դեպքում է տեղի ունենում ռեկվիզիցիա.

76. Նշված ձևակերպումներից ո՞րն է համապատասխանում վարձույթի պայմանագրի հասկացությանը.

77. Նշվածներից ո՞ր նպատակով է վարձույթի պայմանագրով տրամադրված գույքն օգտագործվում.

78. Ինչպե՞ս է կնքվում վարձույթի պայմանագիրը.

79. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ ինչպիսի՞ պայմանագիր է վարձույթի պայմանագիրը.

80. Որքա՞ն ժամկետով է կնքվում վարձույթի պայմանագիրը.

81. Ո՞վ է պարտավոր կատարել վարձակալության հանձնված գույքի հիմնական և ընթացիկ վերանորոգումը.

82. Ի՞նչ ժամկետով կարող է կնքվել ենթագործակալության պայմանագիրը.

83. Ի՞նչ է տեղի ունենում, երբ հողամասը, որի վրա գտնվում է վարձակալված շենքը կամ շինությունը, վաճառվում է այլ անձի.

84. Ե՞րբ է ծագում քաղաքացու իրավունակությունը.

85. Ո՞ր դեպքերում է անձը ճանաչվում անգործունակ.

86. Ո՞ր դեպքերում է անձի նկատմամբ սահմանվում պատրոնաժ.

87. Ո՞վ է անգործունակ ճանաչված քաղաքացու անունից գործաքներ կնքում.

88. Ու՞մ նկատմամբ է սահմանվում խնամակալություն.

89. Ու՞մ նկատմամբ է սահմանվում հոգաբարձություն.

90. Ե՞րբ է անձը անհայտ բացակայող ճանաչվում.

91. Ե՞րբ է անձը մահացած ճանաչվում.

92. Նշվածներից ո՞րը չի կարող լինել գրավի առարկա.

93. Նշվածներից ո՞րն է համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսգրքին.

94. Բառացությամբ օրենքով կամ կողմերի համաձայնությամբ ուղղակորեն նախատեսված դեպքերի ինչի՞ է հանգեցնում գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը.

95. Ո՞վ կարող է առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման պահանջ ներկայացնել.

96. Նշվածներից ո՞րն է շինծու գործարքը.

97. Եթե այլ բան նախատեսված չէ օրենսգրքով, այլ օրենքներով կամ կապալի պայմանագրով, ապա ո՞վ է կրում նյութերի, սարքավորումների, մշակման

(վերամշակման) հանձնված գույքի կամ պայմանագրի կատարման համար օգտագործվող այլ գույքի պատահական կորստի կամ վնասվածքի ռիսկը.

98. Ե՞րբ կարող է նիրառուն հրաժարվել նվիրատվությունից.

99. Ո՞ր դեպքերում հավատարմագրային կառավարիչը պատասխանատվություն չի կրում պատճառված վնասների համար.

100. Նշվածներից ո՞րը գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրի դադարման հիմք չէ.

101. Նշվածներից ո՞րն է գրավականը.

102. Ի՞նչ ժամկետում ժառանգն իրավունք ունի հրաժարվել ժառանգությունից.

103. Որքա՞ն ժամկետում կարող է ընդունվել ժառանգությունը.

104. Ինչպիսի՞ պայմանագիր է կենցաղային կապալի պայմանագիրը.

105. Ի՞նչ է տեղի ունենում, երբ նույն օրը մահացել են այն անձինք, ովքեր իրավունք ունեին ժառանգել մեկը մյուսից հետո.

106. Նշվածներից ո՞վ չունի պարտադիր բաժնի իրավունք.

107. Նշվածներից ո՞վ առաջին հերթի ժառանգ չէ.

108. Նշվածներից ո՞վ է չորրորդ հերթի ժառանգ.

109. Նշվածներից ո՞ր դեպքում է տեղի ունենում ժառանգության տրանսմիսիա.

110. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ ո՞րն է քաղաքացու բնակության վայրը.

111. Ո՞ր դեպքում է բանկը կատարում վճարման հանձնարարականը.

112. Ե՞րբ է պարտապանը պարտավոր է կատարել այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով.

113. Ի՞նչ է ապահովագրավճարը

114. Ո՞ր դեպքում է մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական համարվում.

115. Ո՞րն է կեղծ գործարքը.

116. Անշարժ գույքը գնորդին հանձնելու վաճառողի պարտականությունը ո՞ր պահից է համարվում կատարված .

117. Ի՞նչ ժամկետով է պայմանագիրը համարվում կնքված, եթե բնակելի տարածության վարձակալության ժամկետը պայմանագրով որոշված չէ.

118. Ո՞ր դեպքում առավել վտանգի աղբյուրի սեփականատերը չի կրում պատասխանատվություն այդ աղբյուրի պատճառած վնասի համար.

119. Ո՞վ է կարող է ֆակտորինգի պայմանագրով ֆինանսական գործակալ լինել.

120. Ի՞նչը կարող է ֆինանսական վարձակալության պայմանագրի առարկա լինել.

121. Ու՞մ սեփականությունն են վարձակալած գույքի օգտագործման արդյունքում վարձակալի ստացած պտուղները, արտադրանքը և եկամուտները.

122. Ի՞նչ ձևով է կնքվում նախնական պայմանագիրը

123. Ե՞րբ լիազորագիր ստացած անձը կարող է այն գործողությունների կատարումը, որոնց համար լիազորված է, վերալիազորել այլ անձի

124. Ո՞ր դեպքում ներկայացուցիչը կարող է գործարք կնքել նաև մեկ այլ անձի նկատմամբ, որի ներկայացուցիչն է միաժամանակ.

125. Ի՞նչ ժամկետում կարող է ներակայցվել առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման մասին հայցը

126. Ո՞ր պահից է վիճահարույց գործարքն անվավեր.

127. Ո՞ր պահից է իրավաբանական անձը համարվում է լուծարված, իսկ նրա գոյությունը՝ դադարած.

128. Ու՞մ համաձայնությամբ կարող է սահմանափակ գործունակ քաղաքացին կնքել գործարքներ, ինչպես նաև ստանալ աշխատավարձ, կենսաթոշակ և այլ եկամուտներ ու տնօրինել դրանք.

129. Ո՞վ է հատուցում անբարեխիղճ գովազդի հետևանքով պատճառված վնասը.

130. Ի՞նչ իրավական հետևանքներ է առաջացնում քաղաքացիների և իրավաբանական անձանց հրաժարվելն իրենց իրավունքներն իրականացնելուց.

131. Ու՞մ համաձայնությամբ պարտապանը կարող է իր պարտքն այլ անձի փոխանցել.

132. Որքա՞ն ժամանակ են գործում հեղինակի գույքային իրավունքները

133. Ո՞վ է հատուցում քաղաքացուն կամ իրավաբանական անձին պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողություններով (անգործությամբ) պատճառված վնասը.

134. Ինչպե՞ս պետք է կնքվի տուժանքի մասին համաձայնությունը.

135. Ո՞րն է 14 տարեկան չդարձած անչափահասների կամ խնամակալության տակ գտնվող քաղաքացիների բնակության վայրը.

136. Ի՞նչ պատասխանատվություն են կրում վնասը համատեղ պատճառած անձինք տուժողի առջև.

137. Լիզինգի պայմանագրով ո՞վ կարող է լինել վարձատու.

138. Նշվածներից ո՞ր հանգամանքը պարտավոր չէ ապացուցել տուժանք վճարելու պահանջով պարտատերը.

139. Նշվածներից ո՞ր իրավական հետևանքը չի առաջանում գույքը վարձակալության հանձնելու դեպքում.

140. Նշվածներից ո՞ր իրավական հետևանքը չի առաջանում գույքը անհատույց օգտագործման հանձնելու դեպքում.

141. Նշվածներից ո՞վ կարող է լինել գույքի գրավատու.

142. Որքա՞ն ժամանակ է լիազորագիրը ուժը պահպանում, եթե դրանում ժամկետ նշված չէ.

143. Ո՞վ է կրում կատարված աշխատանքի արդյունքի պատահական կորստի կամ վնասվածքի ռիկսը.

144. Նշված ո՞ր հիմքով նվիրատվության պայմանագիրը կատարելուց հրաժարվելը նվիրառուին իրավունք չի տալիս պահանջել վնասների հատուցում.

145. Նշվածներից ո՞րն է կապալառուի պարատականություններից.

146. Նշվածներից ո՞րն է համապատասխանում ձեռնարկատիրական գործունեության բնորոշմանը.

147. Նշվածներից ո՞րը չի մտնում վնաս հասկացության մեջ.

148. Նշվածներից ո՞րն է համապատասխանում գործունակության՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում տրված բնորոշմանը.

149. Նշվածներից ո՞րն է քաղաքացուն անգործունակ ճանաչելու հիմք.

150. Ո՞վ է գրավառուն.

151. Ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած զինծառայողը կամ քաղաքացին ո՞ր դեպքում կարող է մահացած ճանաչվել.

152. Մահացած ճանաչված քաղաքացու գույքը հատուցելի գործաքներով ձեռք բերած անձը ո՞ր դեպքում են պարտավոր վերադարձնել նրա գույքը.

153. Ո՞ ր գործարքներն են համարվում վերացնող պայմանով կնքված.

154. Ո՞ր գործարքներն են համարվում հետաձգող պայմանով կնքված.

155. Ի՞նչ է երաշխիքը.

156. Ի՞նչ է երաշխավորությունը.

157. Նշվածներից ո՞ր դեպքում է թույլատրվում հաշվանցի կատարումը.

158. Ե՞րբ է ծագում սեփականության իրավունքը նոր ստեղծված անշարժ գույքի նկատմամբ.

159. Եթե վերամշակման արժեքն էականորեն չի գերազանցում նյութերի արժեքը, ապա նոր գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ո՞վ է ձեռք բերում.

160. Ո՞րն է համարվում տիրազուրկ գույք.

161. Ո՞րն է համարվում ինքնակամ կառույց.

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենք

162. Ի՞նչ եղանակով նոտարը կարող է ազատվել նոտարական գործողությունների կատարման գաղտնիքը պահպանելու պարտականությունից.

163. Ո՞վ կարող է նոտարի նկատմամբ քրեական հետապնդում հարուցել.

164. Նշվածներից ո՞րն է նոտարի լիազորությունների դադարման հիմք.

165. Նշվածներից ո՞ր հիմքով է նոտարին պաշտոնից ազատում դատարանը.

166. Նշվածներից ո՞րը նոտարի պարտականությունների մեջ չի մտնում.

167. Ո՞ր դեպքում է նոտարը համարվում կարգապահական տույժի չենթարկված.

168. Նշվածներից ո՞րն է նոտարին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք.

169. Նշվածներից ո՞րը նոտարի նկատմամբ կիրառվող կարգահապահական տույժի տեսակ չէ.

170. Ո՞վ կարող է լինել նոտարի ստաժոր.

171. Ո՞րն է նոտարական պալատի բարձրագույն մարմինը.

172. Ի՞նչ կառուցվածք ունի նոտարական պալատի վարչությունը.

173. Նշված գործողություններից ո՞րը նոտարը չի իրականացնում.

174. Նշվածներից ո՞ր դեպքում է նոտարը պարտավոր պարզել ֆիզիկական անձանց, նրանց ներկայացուցիչների կամ կազմակերպության ներկայացուցիչների ինքնությունն ու գործունակությունը.

175. Ո՞վ կարող է հանդես գալ որպես թարգմանիչ նոտարական գործողություններ կատարելու ժամանակ.

176. Նշվածներից ո՞րն է նոտարական գործողության կատարումը մերժելու հիմք.

177. Ո՞վ է վերահսկողություն իրականացնում Նոտարի իրականացրած նոտարական կամ այլ գործողությունների կատարման, ինչպես նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հիման վրա ընդունված իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ.

178. Ո՞վ է նոտարը.

179. Ու՞մ կարող են տրամադրվել նոտարական գործողությունների կատարման մասին տեղեկանքներ.

180. Որո՞նք են նոտարի գործունեության սահմանափակումները.

181. Ի՞նչ ժամկետում կարող է նոտարի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցվել.

182. Ե՞րբ է թույլատրվում նոտարական գործից փաստաթղթեր հանելը.

183. Ի՞նչ ժամկետներում է նոտարը պարտավոր հաշվետվություն ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարություն.

184. Ու՞մ մասնակցությամբ է կատարվում ժառանգության զանգվածի գույքագրումը.

185. Ու՞ր կարող է բողոքարկել նոտարը կարգապահական տույժի նշանակումը.

186. Ո՞վ է սահմանում նոտարի մատուցած ծառայությունների համար վճարի չափը.

187. Նշվածներից ո՞րը նոտարին պաշտոնից ազատելու իմպերատիվ հիմք չէ.

188. Ո՞վ է նոտարի նկատմամբ կիրառում 6 ամիս ժամկետով գործունեության կասեցման կարգապահական տույժը.

189. Քանի՞ ստաժոր կարող է ունենալ նոտարը.

190. Ի՞նչ ժամկետում է պարտավոր պաշտոնից ազատված նոտարը ՀՀ արդարադատության նախարարություն հանձնել իր մոտ պահպանված փաստաթղթերը և կնիքը.

191. Նշված խախտումներից ո՞րի դեպքում կարող է կիրառվել 6 ամիս ժամկետով գործունեության կասեցում կարգապահական տույժի տեսակը.

192. Ու՞մ է անհապաղ հայտվում նոտարին ձերբակալելիս, բերման ենթարկելիս, կալանավորելիս, խուզարկելիս, նրան դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելիս

193. Ո՞ր պահից է նոտարի գործունեությունը կասեցված համարվում.

194. Ի՞նչ իրավունքներ ունի գործունեությունը կասեցված նոտարը մինչև գործունեության կասեցման ժամկետի ավարտը.

195. Նշվածներից ո՞րը նոտարին պաշտոնից ազատելու հիմք չէ.

196. Ո՞վ դատարան դիմելու իրավունք ունի օրենքի պահանջների խախտմամբ նոտարի պաշտոնում նշանակված լինելու դեպքում նոտարին պաշտոնից ազատելու համար

197. Ու՞ր կարող է անձը, որի շահերը շոշափում է նոտարի գործողությունը կամ անձը, որին մերժվել է նոտարական գործողություն կատարելը, կատարված նոտարական գործողությունը կամ նոտարական գործողության կատարումը մերժելը բողոքարկել.

198. Ե՞րբ է նոտարական պալատի անդամների ժողովն իրավազոր

199. Ի՞նչ ժամկետով է նոտարը փաստաթուղթն ի պահ է ընդունում.

200. Նշվածներից ո՞րն է նոտարի նկատմամբ կիրառվող տույժ.

201. Նոտարական գործողությունների ժամանակ նշվածներից ու՞մ արգելված չէ հանդես գալ որպես վկա.

202. Ի՞նչ ժամկետով է հետաձգվում նոտարական գործողությունների կատարումը դրանց կատարման համար նոտարի կողմից կազմակերպություններից

համապատասխան տեղեկություններ կամ փաստաթղթեր ստանալու անհրաժեշտության դեպքում .

203. Ո՞վ կարող է նշանակվել նոտարի պաշտոնում.

204. Ու՞մ մասնակցությամբ կարող է նոտարի աշխատանքային վայրը խուզարկվել.

205. Ի՞նչ ժամկետում է նոտարն իր պաշտոնեական պարտականությունների կատարմանն անցնում.

206. Նշվածներից ո՞ր իրավունքը նոտարը չունի.

207. Առանց ու՞մ համաձայնության նոտարը չի կարող փոխադրվել այլ նոտարական տարածք.

208. Ո՞վ է հաստատում նոտարական գործողությունների սակագները.

209. Ի՞նչ ժամկետում պետք է ավարտվի նոտարի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի քննությունը.

210. Ձայների ի՞նչ մեծամասնությամբ են ընդունվում նոտարական պալատի վարչության որոշումները.

211. Ո՞վ է սահմանում նոտարական գրանցամատյանի ձևը և գրանցամատյանում գրանցումների կատարման կարգը.

212. Նշվածներից ո՞րն է նոտարի գործունեության կասեցման հիմք.

213. Ո՞վ է սահմանում նոտարների հաստիքների քանակը.

214. Ո՞վ է սահմանում վավերացման մակագրությունների օրինակելի ձևերը.

215. Ու՞մ է տրվում է ժառանգության իրավունքի վկայագիրը գույքը ժառանգության իրավունքով համայնքին անցնելու դեպքում.

216. Ե՞րբ կարող է նոտարը հաստատել անձի՝ ողջ լինելու փաստը.

217. Ո՞վ է կատարում նոտարական գործողությունների ժամանակ թարգմանչի մատուցած ծառայությունների համար վճարումը.

218. Ո՞վ է հաստատում նոտարական պալատի վճարովի հաստիքների ցանկը.

219. Ի՞նչ ժամկետում է նոտարական պալատի նախագահը պարտավոր նոտարական պալատի ժողովի, վարչության կամ իր կողմից ընդունված որոշումների պատճենը, որոշումներն ուղարկել արդարադատության նախարարություն.

220. Ո՞ր դեպքում Արդարադատության նախարարը նոտարի պաշտոնում կարող է նշանակել նաև նոտարական գործունեության ստաժավորում չանցած և որակավորման քննություն չհանձնած այն անձին.

221. Առավելագույնը քանի՞ նոտարական գրասենյակ կարող է ստեղծվել մեկ նոտարական տարածքում.

222. Քանի՞ վկա պետք է ներկա լինի փակ կտակի վավերացմանը.

223. Ֆինանսական վարձակալության պայմանագրում գույքի պատահական կորստի կամ պատահական վնասվածքի մասին դրույթների բացակայության դեպքում, ո՞ր պահից է այդ ռիսկը անցնում վարձակալին.

224. Ո՞վ կարող է դիմել դատարան անարժան ժառանգին ժառանգությունից մեկուսացնելու պահանջով.

225. Ո՞վ սահմանում նոտարի աշխատանքային ռեժիմը.

226. Ո՞վ կարող է նոտարի խրախուսման մասին որոշում ընդունել.

227. Ո՞վ կարող է լինել նոտարի ստաժոր.

228. Ո՞վ չի կարող նշանակվել նոտարի օգնական.

229. Ե՞րբ է համարվում փոխառության պայմանագիրը կնքված.

230. Ո՞րն է համարվում փակ կտակ.

231. Ի՞նչ չափից չպետք է պակաս լինի նոտարի օրենքով սահմանված կարգով ապահովագրված պատասխանատվության ռիսկը.

232. Ու՞մ նախաձեռնությամբ է նոտարի մոտ իրականացվում ստուգումներ.

233. Այլ պետությունների տարածքում Հայաստանի Հանրապետության անունից ո՞վքեր են կատարում նոտարական գործողություններ.

234. Որքա՞ն ժամկետում պետք է ավարտվի նոտարի նկատմամբ կարգապական վարույթի քննությունը.

235. Ո՞ր դեպքում է նոտարը համարվում կարգապահական տույժի չենթարկված.

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենք

236. Ի՞նչ է գույքը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի իմաստով.

237. Ո՞ր իրավունքի կամ սահմանափասկման գրանցմանն է առաջնահերթությունը տրվում, եթե միևնույն գույքի նկատմամբ պետական գրանցման են ներկայացվել բովանդակությամբ իրարամերժ իրավունքներ կամ սահմանափակումներ.

238. Նշվածներից ո՞րը սահմանափակումների պետական գրանցման համար հիմք չէ.

239. Ի՞նչ է ընդգրկում գույքի պետական գրանցումը.

240. Որո՞նք են պետական գրանցման համակարգի հիմնական փաստաթղթերը.

241. Ո՞վ է սահմանում անշարժ գույքի կադաստրային ծածկագրման կարգը.

242. Նշվածներից ո՞րն է քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության որակավորման վկայականի գործողության կասեցման հիմք.

243. Նշվածներից ո՞րն է քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության որակավորման վկայականի գործողության դադարեցման հիմք.

244. Ո՞վ է նշանակում և ազատում Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի պետական ռեգիստրի ղեկավարին.

245. Ի՞նչ ժամկետում պետք է պետական գրանցման ներկայացվեն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագմանը, փոփոխմանը, փոխանցմանն ուղղված գործարքներից (բացառությամբ միակողմ գործարքների) ծագող իրավունքները .

246. Ո՞վ է սահմանում հողամասի և շինության հատակագծերի ձևերը և հատակագծերին ներկայացվող պահանջները.

247. Նշվածներից ո՞րը իրավունքի պետական գրանցման վարույթի կասեցման հիմք չէ.

248. Ի՞նչ ժամկետներում է վերսկսվում իրավունքի պետական գրանցման կասեցված վարույթը.

249. Նշվածներից ո՞րը իրավունքի պետական գրանցման վարույթի դադարեցման հիմք չէ.

250. Նշվածներից ո՞րն է իրավունքի պետական գրանցման մերժման հիմք.

251. Նշվածներից ո՞րն է պայմանագրի հիման վրա ձեռք բերված իրավունքի պետական գրանցումը, բացառությամբ հիփոթեքի պետական գրանցման, պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում չեղարկելու հիմք.

252. Ու՞մ դիմումի հիման վրա է իրականացվում շինության ոչնչացման հիմքով դրա նկատմամբ գրանցված սեփականության իրավունքի դադարման պետական գրանցումը.

253. Ի՞նչ ժամկետում է կատարվում իրավունքի դադարման պետական գրանցումը.

254. Բնակելի նշանակության ո՞ր անշարժ գույքի նկատմամբ չեն կիրառվում «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարները.

255. ‹‹Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ որո՞նք պետական գրանցման սուբյեկտներ չեն.

256. Ո՞վ է սահմանում անշարժ գույքի միավորի սահմանները որոշման եղանակը, դրանց ճշտության նկատմամբ տեխնիկական պահանջները, սահմանանիշերի ձևերը.

257. Ո՞վ է սահմանում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության աշխատանքների իրականացմանը ներկայացվող պարտադիր պահանջները.

258. Նշվածներից ու՞մ անվամբ պետական գրանցում կատարելու լիազորություն ունեցող պաշտոնատար անձը կարող է գրանցել գույքի նկատմամբ իրավունքներ.

259. Ե՞րբ են գույքի նկատմամբ իրավունքները և սահմանափակումները համարվում գրանցված.

260. Նշվածներից ո՞ր եղանակով կարող է իրականացվել թույլ տված սխալների ուղղումը, եթե պետական գրանցումն իրականացվել է իրավասու մարմնի տված փաստաթղթի հիման.

261. Կառուցվող բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի առանձնացված միավորի նկատմամբ իրավունքներն այլ կառուցապատողի փոխանցվելու դեպքում փոխանցված իրավունքը ձեռք բերելը հաստատող փաստաթղթերի հիման վրա նոր կառուցապատողի անվամբ ի՞նչն է գրանցվում.

262. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ե՞րբ է տեղի ունենում կառուցվող բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերում առանձնացված միավորների նկատմամբ կառուցվող շենքերից անշարժ գույք գնելու գրանցված իրավունք ունեցող անձնանց սեփականության իրավունքի պետական գրանցումը

263. Ու՞մ դիմումի հիման վրա է իրականացվում բազմաբնակարան շենքի սեփականատերերի ընդհանուր գույքի նկատմամբ սեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքի պետական գրանցումը.

264. Եթե ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած և նրանց համատեղ սեփականությունը հանդիսացող գույքի նկատմամբ գրանցվել է ամուսիններից միայն մեկի սեփականության իրավունքը այն հիմքով, որ իրավունքի գրանցման համար հիմք հանդիսացած իրավահաստատող փաստաթղթերում որպես իրավատեր նշված է եղել միայն ամուսիններից մեկը, ապա ամուսինների համատեղ սեփականությունը ինչպե՞ս է գրանցվում նման գույքի նկատմամբ.

265. Շինության ոչնչացման հիմքով դրա նկատմամբ գրանցված սեփականության իրավունքի դադարման պետական գրանցումը ու՞մ դիմումի վրա է իրականացվում.

266. Ո՞վ է լիազորված ճանաչելու ստորագրությունների իսկությունը

267. Նշվածներից ո՞րը սահմանափակումների պետական գրանցման հիմք չէ.

268. Նշված տարրերից ո՞րն է բովանդակում ստորագրությունների իսկության ճանաչումը.

ՀՀ Սահմանադրություն[1]

269. Ե՞րբ կարող է անցկացվել ՀՀ նախագահի արտահերթ ընտրություն.

270. Ո՞վ է նշանակում ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներին.

271. Ո՞ր մարմինն է համաձայնություն տալիս դատավորին դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ.

272. Ե՞րբ կարող է անցկացվել ՀՀ Ազգային Ժողովի արտահերթ ընտրություն.

---

[1] Անհրաժեշտ է հաշվի առնել, որ նշված բաժնում ընդգրկված հարցերը վերաբերում են և՛ 2005 թվականի նոյեմբերի 27-ին թվականին ընդունված Սահմանադրության,և՛ 2015 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված Սահմանադրության փոփոխությունների ***ուժի մեջ մտած դրույթներին:***

273. Նշվածներից ո՞րն Ազգային ժողովը արձակելու հիմք չէ.

274. Ու՞մ է պատկանում Ազգային Ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքը.

275. Որո՞նք են ՀՀ կառավարության անդամների համար սահմանված անհամատեղելիության պահանջները.

276. Նշվածներից ո՞րը Արդարադատության խորհրդի լիազորություն չէ.

277. Նշվածներից ո՞րը Դատախազության բացառիկ սահմանադրական լիազորությունը չէ.

278. Նշվածներից ո՞րն է ՀՀ կառավարության լիազորություն.

279. Ո՞ր մարմինն է լուծում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցը.

280. Ո՞վ կարող է ընտրվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպան.

281. Նշվածներից ո՞րը ընտրական իրավունքի սկզբունք չէ.

282. Ի՞նչ բովանդակություն ունի ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու իրավունքը.

283. Նշվածներից ո՞վ չի կարող լինել կուսակցության անդամ.

284. Ո՞վ կարող է ընտրվել Ազգային ժողովի պատգամավոր.

285. Ո՞վ կարող է ընտրվել ՀՀ նախագահ.

286. Ի՞նչ իրավական ակտեր է հրապարակում ՀՀ նախագահը.

287. Նշվածներից ո՞րն է Հանրապետության Նախագահի լիազորություն

288. Հանրապետության Նախագահն ի՞նչ ժամկետում է ստորագրում և հրապարակում ՀՀ Ազգային ժողովի կողմից վերստին ընդունված օրենքը.

289. Ո՞վ է մշակում և իրականացնում Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը.

290. Ե՞րբ են դադարում պատգամավորի լիազորությունները.

291. Ե՞րբ Հանրապետության Նախագահը կարող է Ազգային ժողովի նախագահի կամ վարչապետի առաջարկությամբ արձակել Ազգային ժողովը.

292. Ձայների ի՞նչ մեծամասնությամբ է Ազգային ժողովն ընդունում Կառավարության եզրակացության համաձայն՝ պետական բյուջեի եկամուտները նվազեցնող կամ ծախսերն ավելացնող օրենքների նախագծերը.

293. Ազգային ժողովի նախագահը պատգամավորների ձայների ի՞նչ մեծամասնությամբ է գումարում Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան կամ նիստ.

294. Նշվածներից ո՞րը Սահմանադրական դատարանի լիազորություններից չէ.

295. Ի՞նչ իրավական ակտով է սահմանվում ՀՀ օրհներգը.

296. Օրենքով նախատեսված ի՞նչ նպատակով կարող է սահմանափակվել ամուսնանալու ազատությունը.

297. Ո՞ր մարմինն է նշանակում և ազատում մարզպետներին.

298. Ու՞մ է Մարդու իրավունքների պաշտպանը տարեկան հաղորդում է ներկայացնում իր գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին.

299. Ո՞վ կարող է ՀՀ քաղաքացիություն ձեռք բերել պարզեցված կարգով.

300. Ո՞վ է նշանակում վերահսկիչ պալատի նախագահին.